ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Հարթագյուղ համայնք, հասցե գ.Հարթագյուղ

Հեռ. 077-21-19-57 , mail.ru - hartagyugh@bk.ru

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

N-Ե/181 – 2021թ

<< 10 >> հոկտեմբերի 2021թ.

Հարգելի պարոն մարզպետ՝

Ի պատասխան Ձեր թիվ 01/107.3/00404-2020 թվականի գրությանը ներկայացնում ենք ձեզ Հարթագյուղ համայնքի ավագանու 17.11.2021 թվականի հրավիրված հերթական նիստի մասին տեղեկացումը, նիստի օրակարգը, նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերը:

Առդիր՝ 6 թերթ:

Հարգանքով՝

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Հ. Սարգսյան

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Հարթագյուղ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Հարթագյուղ	Ավագանու հերթական նիստ	17.11.2021թ.	12:00	Հարթագյուղի համայնքապետարանում (գ.Հարթագյուղ , 6-րդ փողոց, շենք 3)

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի ՀԵՐԹԱԿԱՆ 14-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՁԵԿ. Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Հարթագյուղ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հարթագյուղ համայնքի ավագանու 2021 թվականի 14-րդ հերթական նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հարթագյուղ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:
2. Հարթագյուղ համայնքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 12-ի Հարթագյուղ համայնքում խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով ստեղծելու մասին թիվ 15 - Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Հարթագյուղ համայնքում խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով ստեղծելու մասին:
3. Հարթագյուղ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով , 66-րդ հոդվածի 2-րդ կետով , << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի և <<Աստղիկ>> բարեգործական ՀՄԴ - ի միջև 12.09.2018 թվականին կնքված թիվ 2123, 2126 հողամասի վարձակալության պայմանագրերը, դրա հիման վրա 25.09. 2018 թվականին տրված հողամասի վարձակալության իրավունքի թիվ 25092018-06-0104, 25092018-06-0043 վկայականները և համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Տալ համաձայնություն Հարթագյուղ համայնքի վարչական տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող , վարձակալության իրավունքով վարձակալին տրամադրված բնակավայրերի այլ հողեր.

   ա) 06-061-0030-0006 ծածկագրով 0, 08784 հա մակերեսով, 4-րդ փող., 2 նրբ., 4 հողամաս հասցեով, բնակավայրի կառուցապատման նպատակային նշանակության այլ հողեր,

   բ) 06-061-0031-0006 ծածկագրով 0,08974 հա մակերեսով, 4-րդ փող, 2 նրբ., 3 հողամաս բնակավայրի կառուցապատման նպատակային նշանակության այլ հողեր:

2. Հաշվի առնելով, որ հողամասերը վարձակալության իրավունքով պատկանում են վարձակալին և վարձակալը ունի գնման նախապատվություն, 06-061-0030-0006 ծածկագրով 0,08784 հա մակերեսով հողամասը որպես գնման նախապատվություն ունեցող իրավաբանական անձի՝ 149 328 ՀՀ դրամով և 06-061-031-0006 0,8974 հա մակերեսով հողամասը գյուղատնտեսական նշանակության , որպես գնման նախապատվություն ունեցող իրավաբանական անձի՝ 152 558 ՀՀ դրամով ուղղակի վաճառքով օտարել վարձակալին:

3. Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Հարություն Սարգսյանին օրենքով սահմանված կարգով վարձակալի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր և համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 15-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՁԵԿ. Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի << Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի, թիվ 164 - Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին >> թիվ 631-Ն որոշմամբ և << Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Հարթագյուղ համայնքում ստեղծել խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով հետևյալ կազմով.

   Հանձնաժողովի նախագահ՝ Հարություն Սարգսյան

   Քարտուղար՝ Արփինե Թորոսյան

   Անդամներ՝

   1. Եղիշե Հակոբյան
   2. Լալա Բարսեղյան
   3. Գալուստ Ավետիսյան

2. Ուժը կորցրած ճանաչել Հարթագյուղ համայնքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 12-ի << Հարթագյուղ համայնքում խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով ստեղծելու մասին >> թիվ 15-Ա որոշումը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, և համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 16-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի կամավոր խնդիրները , դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 5 - Ա որոշմանը համապատասխան , հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման , պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման հաշմանդամների , կերակրողին կորցրած , ընտանիքների սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկվող հանձնաժողովի եզրակացությունները՝ Հարթագյուղ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունմանը հաջորդող օրվանից:

Հ ա վ ե լ վ ա ծ

ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 17-ի , թիվ N -Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉ(ՆԵՐԻ)

1. Գևորգյան Նարինե Կառլենի - քսան հազար դրամ,/ երեխայի ծննդյան գումար/